«Հաստատում եմ» ______________

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտոր՝ ԺԴ Ե. Մելքոնյան

« 18 » նոյեմբերի 2021թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության

Ռուզաննա Գուրգենի Ղարիբյանի «Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաները» խորագրով թեկնածուական ատենախոսության մասին՝ ներկայացված է ԺԳ. 00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ռուզաննա Գուրգենի Ղարիբյանի «Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաները» թեմայով ատենախոսության արդիականությունը պայմանավորված է արտակարգ իրավիճակներում հասարակության անվտանգության և պաշտպանության ապահովման անհրաժեշտությամբ, երբ այսօր աշխարհում պարբերաբար տեղի են ունենում պատերազմական, ահաբեկչական և դիվերսիոն գործողություններ, տարերային, տեխնածին և բնածին աղետներ ու վտանգներ, որոնք չափից դուրս վտանգավոր և ճնշող ազդեցություն են թողնում մարդու վրա, մարդը թուլանում է և չի կարողանում կամ դժվարությամբ է դիմակայում վերը նշված մարտահրավերներին: Այս առումով կարևոր նշանակություն է ստանում անվտանգության մշակույթի դաստիարակության գործընթացը, այդ գործընթացին առնչվող տարբեր հարցերի ուղղությամբ արված ուսումնաhիրությունները, որոնք կարող են օգնել մարդու մոտ ձևավորելու հուզական վիճակ, գիտելիքներ և պատկերացումներ, կարողություններ և

հմտություններ տարբեր սպառնալիքներին, տարերքներին, հանկարծահաս և անսովոր իրավիճակներին, կորուստներին և մարտահրավերներին դիմակայելու համար:

Այսպիսով, թեմայի արդիականությունը հիմնավորվում է մանկավարժագիտական, ինչպես նաև հասարակության պահանջի առկայության տեսանկյուններից:

Ատենախոսության ներածությունում հիմնավորվում է հետազոտության արդիականությունը, սահմանված է հետազոտության նպատակը, ձևակերպված են հիմնական խնդիրները, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացված հիմնական դրույթները, ներկայացված է ատենախոսության տեսական, գործնական նշանակությունը, կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության առաջին գլուխը կրում է «Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման գիտատեսական և գիտամեթոդական հիմքերը» խորագիրը, որը բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին՝ «Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի հասկացությունը» խորագիրը կրող ենթագլխում հանգամանորեն ներկայացված են «անվտանգության մշակույթ» եզրույթի տարբեր սահմանումները, այդ հասկացության մեկնաբանման մոտեցումները, զուգահեռաբար հիմնավորելով արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման կարևորությունն ու անհրաժեշտությունը: Իրապես արժեքավոր է այն, որ հեղինակը երկրորդ ենթագլխում արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացումը դիտարկում է սոցիալ-մանկավարժական գործընթաց՝ քննարկելով այդ գործընթացի տարբեր տեսանկյունները, սկզբունքները, համակարգի փոխկապված հատկությունները: Ուշագրավ է սոցիալ-մանկավարժական ուսուցման գործընթացի բնութագրական մի շարք ցուցանիշների, սոցիալ-մանկավարժական գործընթացի զարգացման հիմնական փուլերի առանձնացումը:

Այս գլխում ատենախոսը մանրամասնորեն քննարկում է արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման գործընթացի նպատակը, բովանդակությունը, միջոցները և չափանիշները: Ներկայացված է Միացյալ ազգերի զարգացման ծրագրի կողմից Հայաստանում

դպրոցականների շրջանում բնածին վտանգավոր երևույթների վերաբերյալ ստացված տեղեկություններ, վերլուծվում է վտանգի և խոցելիության կապը: Մանրամասնորեն քննարկվում է ուսումնական հաստատության աղետների ռիսկի կառավարման համակարգի կառուցվածքը, ուսումնական գործընթացում դպրոցականի անվտանգության մշակույթի դաստիարակության հիմնական բնութագրիչները, առանձնահատկությունները:

Աշխատանքի երկրորդ գլխում, որը կրում է «Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորման և զարգացման մանկավարժական տեխնոլոգիաների առանձնահատկությունները» խորագիրը, ատենախոսը ներկայացնում է արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաների դասակարգումը, ձևավորվածության բաղադրիչները, ձևերը, չափանիշները և ախտորոշումը: Հեղինակին հաջողվել է համակարգել կատարված ուսումնասիրությունները, վերլուծությունները և ներկայացնել դպրոցականի անվտանգության մշակույթի ձևավորվածության ախտորոշիչ գնահատման ցուցանիշները: Դիտարկվել է տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դպրոցականների անվտանգության մշակույթի զարգացման գործընթացում, վերհանվել են SS օգտագործման գործընթացում մանկավարժական բազմաթիվ խնդիրներ: Այս գլխում խորապես ուսումնասիրվել է անձնակողմնորոշիչ տեխնոլոգիաների դերը արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման գործընթացում:

Ատենախոսության երրորդ՝ «Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը և արդյունավետության փորձարարական ստուգումը» խորագիրը կրող գլխում ներկայացված է արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությանը վերաբերող հետազոտությունը, կատարվել է մանկավարժական տեխնոլոգիաների արդյունավետության ստուգման արդյունքների լայնածավալ ուսումնասիրություն և վերլուծություն, ընդ որում հարցաթերթի հարցերը խմբավորված

են ըստ բովանդակության և կազմում է 68 հարց: Գնահատելի է, որ հարցման արդյունքների ներկայացման ընթացքում հեղինակը հետևողականորեն անդրադառնում է տարբեր տարիքային խմբերում, տարբեր սեռերի կողմից տրվող պատասխանների վերլուծությանը: Պետք է փաստել, որ, իրապես հարցման արդյունքները հետազոտողին հնարավորություն են տվել հաջողությամբ բացահայտել հիմնախնդրին առնչվող հարցերի էական առանձնահատկությունները:

Աշխատանքում ներկայացված եզրակացությունները համոզիչ են, դրանք հիմնավորված ընդհանրացումներ են և մանկավարժական գիտության, պրակտիկայի տեսանկյունից իրագործելի:

Նշենք մի քանի նկատառումներ հետազոտական աշխատանքի իրականացման վերաբերյալ.

1. Քանի որ հետազոտության նպատակն արտակարգ իրավիճակներում կրտսեր, միջին և ավագ դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաների և դրանց կիրառման ուղիների մշակումն է, կարծում ենք հետազոտության որոշ խնդիրներներում կամ խնդրում կարելի էր դպրոցական տարիքի բաժանմանն /կրտսեր, միջին և ավագ/ անդրադառնալ:
2. Դպրոցականների անվտանգության մշակույթի զարգացման գործընթացում տարբեր տեխնոլոգիաների կիրառման հարցը քննարկելիս կարելի էր տարբեր դասարաններում որոշ տեխնոլոգիաների կիրառման օրինակներ ներկայացնել:
3. Փորձարարական հատվածում առաջադրանք-հարցերի պատասխանները վերլուծված են ըստ տարրական, միջին և ավագ դպրոցներում սովորողների և նրանց սեռերի: Կարծում ենք դրանք ևս կարելի էր կազմել և ներկայացնել սովորողների տարիքային առանձնահատկությունների հաշվառման հիման վրա:
4. Եզրակացություններում երկրորդ կետը ձևակերպված է փոքր-ինչ ընդհանրացված:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ռուզաննա Գուրգենի Ղարիբյանի «Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաները» խորագրով թեկնածուական ատենախոսությունը կուռ գիտահետազոտական

աշխատանք է, այն օգտակար է դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացմանը նպաստող կրթական ծրագրերի մշակման, անվտանգության մշակույթի զարգացման, նոր մանկավարժական հարացույցի ձևավորման խնդիրների պարզաբանման համար: Ատենախոսությունը կարող է նաև արժեքավոր նյութ հանդիսանալ համապատասխան թեմաներով հետաքրքրվող ուսանողների, դասավանդողների և ՀՀ ԱԻՆ աշխատակիցների համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ռուզաննա Գուրգենի Ղարիբյանի «Արտակարգ իրավիճակներում դպրոցականի անվտանգության մշակույթի զարգացման մանկավարժական տեխնոլոգիաները» խորագրով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և իր՝ ԺԳ.00.01 (Մանկավարժության տեսություն և պատմություն) մասնագիտական թվանիշին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընդունվել է 2021 թվականի 15 նոյեմբերի մանկավարժության ամբիոնի թիվ 07 նիստում:

Ամբիոնի նիստին մասնակցել են մանկ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռ. Մարդոյանը, Ա. Մկոյանը, Ս. Սողոյանը, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Ղուկասյանը, Մ. Կարապետյանը, Լ. Հակոբյանը, Ն. Ադամյանը, Ա. Յայլոյանը, մանկ. գիտ. թեկնածու Լ. Միքաելյանը, Ն. Գրիգորյանը, Շ. Ալեքսանյանը, բանասիր. գիտ. թեկնածու Լ. Գևորգյանը, դասախոսներ Մ. Խաչատրյանը, Ի. Շուխյանը, Լ. Բաղդասարյանը, Ս. Համբարյանը:

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ,

մանկ.գիտ.թեկնածու, դոցենտ Լ. Ղուկասյան

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ Լ. Ղուկասյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՇՊՀ-ի գիտքարտուղար Կ. Պետրոսյան